ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ N3

Ք. ԳԱՎԱՌ 1999Թ., ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

# ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
# ԵՐՐՈՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԸ
18-19 դեկտեմբերի 1998թ.

# МАТЕРИАЛЫ ТРЕТЬЕЙ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ
# ГАВАРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
18-19 апреля 1998г.

Գլխավոր խմբագիր՝ պրոֆ. Հ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ:
Խմբագրական կոլեգիա՝ պրոֆ. Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ,
դոցենտ՝ Վ. Ժ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
դոցենտ՝ Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Главный редактор: проф. Г. Х. АКОПЯН.
Редакционная колегия: проф. А. А. СИМОНЯН,
доценты: В. Ж. АЙРАПЕТЯН и
В. Л. КАТВАЛЯН

ԳԱՎԱՌ – 1999
ГАВАР – 1999

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

## Նվիրված Գավառի պետական համալսարանի ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 70-ամյակին:



### Հրանտ Խաչատուրի Հակոբյան

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գավառի պետական համալսարանի հիմնադիր ռեկտոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանը ծնվել է 1927 թվականի դեկտեմբերի 17-ին Նոր Բայազետի շրջանի (այժմ՝ Գեղարքունիքի մարզի) Սարուխան գյուղում՝ արհեստավորի ընտանիքում: 1944 թվականին գերազանց առաջադիմությամբ ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: 1944-1946 թվականներին աշխատել է գյուղի կոլտնտեսությունում: 1946-1948 թվականներին սովորել և ավարտել է Կամոյի (այժմ՝ Գավառի) մանկավարժական տեխնիկումը: Այնուհետև կրթությունը շարունակել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում:

1948-ից 1950 թվականներին՝ երկու տարվա ընթացքում, գերազանցությամբ ավարտել է ինստիտուտը: 1950-1954 թվականներին որպես ուսուցիչ աշխատել է Բասարգեչարի շրջանի (այժմ՝ Վարդենիսի), ապա Կամոյի շրջանի Կարմիրգյուղի, Բատիկյանի (այժմ՝ Գանձակ գյուղի) դպրոցներում, այնուհետև նշանակվել Գեղարքունիք գյուղի դպրոցի ուսմասվար:

Աշխատանքին զուգահեռ՝ Հրանտ Հակոբյանը 1954 թվականին ընդունվել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետ և 1956 թվականին գերազանցությամբ, էքստեռն կարգով ավարտել այն: Միաժամանակ սովորել և ավարտել է նույն բուհի ասպիրանտուրան՝ փիլիսոփայություն մասնագիտությամբ:

1956 թվականին պարոն Հակոբյանը նշանակվել է Սարուխանի միջնակարգ դպրոցի տնօրեն և այդ պաշտոնում աշխատել մինչև 1962 թվականը: Հրանտ Հակոբյանի կազմակերպական փայլուն տաղանդի, հմուտ մանկավարժական կարողությունների շնորհիվ դպրոցը դառնում է շրջանի առաջատար կրթօջախներից մեկը, և նրա փորձը բազմիցս խրախուսվում է ՀԽՍՀ լուսավորության նախարարության կոլեգիայի նիստերում:

Նա 1962 թվականին նշանակվում է Կամոյի կուսշրջկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ: Երկու տարի անց դարձյալ վերադառնում է կրթության ոլորտ, քանզի մանկավարժությունը Հրանտ Հակոբյանի տարերքն էր: 1964 թվականին աշխատանքի է հրավիրվում Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, որտեղ և աշխատում է մինչև 1985 թվականը՝ որպես ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի ավագ դասախոս, դոցենտ, ապա ամբիոնի վարիչի տեղակալ:

Պարոն Հակոբյանը 1973 թվականին պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն, 1978 թվականին ստանում դոցենտի կոչում: 1990 թվականին Հակոբյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1991 թ-ին Հ. Հակոբյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում:
1985 թվականին Հրանտ Հակոբյանը ընտրվել է ԵՊՀ աթեիզմի տեսության և պատմության միջբուհական ամբիոնի վարիչ: Նրա նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ ԵՊՀ գիտական խորհուրդը վերանայում է ուսումնական պլանները և Մայր բուհում սկսում են դասավանդել ոչ թե աթեիզմի տեսություն, այլ «Կրոնների պատմություն և տեսություն» առարկան, ինչն այդ ժամանակի համար բացառիկ խիզախ քայլ էր: Այդ նորարարությունն իր տարածումն է գտնում նաև մյուս բարձրագույն ուսումնական հաստատություններում:
Հրանտ Հակոբյանը գործուն մասնակցություն է ունենում ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի բացմանը և ֆակուլտետում շուրջ մեկ տասնամյակ ղեկավարել է Կրոնագիտության ամբիոնը:
Որտեղ էլ աշխատել է պրոֆեսոր Հակոբյանը, սերտ կապերով կապված է եղել իր ծննդավայրի հետ, նրա միտքը միշտ զբաղեցրել է Գավառում բարձրագույն ուսումնական հաստատություն ստեղծելու խնդիրը: 1991 թվականին՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, նորանկախ երկրում տիրող սոցիալտնտեսական ճգնաժամի պայմաններում խիստ դժվարացել էր հեռավոր շրջաններից մայրաքաղաք հասնելը, Երևանում բնակվելը և բարձրագույն կրթություն ստանալը: Էականորեն պակասել էր նաև Գավառի տարածաշրջանից բուհ ընդունվողների թիվը: Այդ ծանր ժամանակահատվածում Հ. Հակոբյանը նախաձեռնեց Գավառում բուհ ստեղծելու հայրենանվեր գործը, և նրա ջանքերով ու ՀՀ Կառավարության որոշմամբ 1993 թվականին հիմնադրվեց Գավառի պետական համալսարանը, որի հիմնադիր ռեկտոր նշանակվեց պրոֆեսոր Հակոբյանը:
Բազմամյա արդյունավետ և բարեխիղճ աշխատանքի համար պրոֆեսոր Հակոբյանն արժանացել է բազմաթիվ պարգևների, պատվոգրերի և մեդալների: 1987 թվականին պարգևատրվել է «ԽՍՀՄ աշխատանքի վետերան» մեդալով, ապա արժանացել ՀՀ Կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի, Երևանի պետական համալսարանի ոսկե մեդալի, մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի անվան ոսկե մեդալի:
Պարոն Հակոբյանի գիտամանկավարժական բեղուն գործունեության միջազգային հավաստումն է նաև այն, որ նա Քեմբրիջի միջազգային կենսագրությունների կենտրոնի կողմից ճանաչվել է «XXI դարի նշանավոր մտավորականներից» մեկը: Հրանտ Հակոբյանը Գավառի պատվավոր քաղաքացի է: Հեղինակ է մեկ տասնյակ մենագրությունների ու գրքերի, ավելի քան 100 գիտական ու հրապարակախոսական հոդվածների:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Հակոբյան Հ. Խ. | Դավանափոխությունը և սրբազան պատերազմը որպես թուրքական հայակործան քաղաքականության բաղկացուցիչ մաս: | 5 |
| 2. | Հայթյան Ա. Խ. | 1917թ. քաղաքական գործընթացները Ռուսաստանում և դրանց հետևանքները: | 21 |
| 3. | Հարությունյան Հ. Մ. | Հայ-ադրբեջանական հարաբերությունները և մեծ տերությունները (1918-1920թ.): | 32 |
| 4. | Պետրոսյան Ա. Ս. | Սևանա լճի ուսումնասիրության ակնարկ: | 35 |
| 5. | Ռաշիդյան Ս. Հ. | Վարդանանց պատերազմը և քրիստոնեական աշխարհը: | 40 |

ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 6. | Սիսյան Բ. Խ. | Խաչատուր Աբովյանը և Ֆրիդրիխ Շիլլերը: | 48 |
| 7. | Դալլաքյան Ռ. Հ. | Լեզվառճական մի քանի սխալների մասին: | 61 |
| 8. | Հովասափյան Հ. Ն. | Ֆիրդուսին Հայաստանի և հայ զորավարի մասին: | 64 |
| 9. | Գրիգորյան Էդ. Ա. | Ակադեմիկոս Ն.Ի.Տոլստոյը և էթնոլեզվաբանությունը: /ռուս./ | 70 |
| 10. | Մկրյան Վ. Վ. | Բառի ձևի մասին, որպես շարահյուսական նվազագույն միավորի: /ռուս./ | 75 |
| 11. | Խանդանյան Ա. Լ. | Փոխառյալ բառերի դրսևորումները փոխառու լեզուներում: | 80 |
| 12. | Մուխսիխաչոյան Ա. Մ. | Խոսքի միավորները որպես ուսուցման միավորներ: /ռուս./ | 86 |
| 13. | Խանդանյան Ս. Կ. | Ենթական և նրա արտահայտությունը: | 90 |

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 14. | Ղաջոյան Հռ. Ն. | Ազգի և տարածաշրջանի հոգեբանությունը հին տոհմերի պատմության արահետներում: | 94 |
| 15. | Քուրքչյան Լ. Ն. | Ուսուցչի մասնագիտացում ստացող ուսանողների մանկավարժական-հոգեբանական կողմնորոշման մի քանի հարցեր: /ռուս./ | 104 |
| 16. | Օհանյան Հ. Հ. | Աշխատանքային դաստիարակության հայ երախտավորները: | 112 |
| 17. | Օհանյան Հ. Հ. | Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսի հայ դպրոցը և աշխատանքային դաստիարակության հիմնահարցը: | 117 |

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 18. | Բաղշեցյան Է. Ա., Նազարյան Խ. Ե. | Հայաստանի Հանրապետության սելավային հոսքերի վտանգավորության կարգերը և սելավների դեմ ձեռնարկվելիք միջոցառումները: | 123 |

| | | | |
|---|---|---|---|
| 19. | Նազարյան Խ. Ե. | Հայաստանի Հանրապետության սելավային ավազանների շրջանացումը: | 127 |
| 20. | Նազարյան Խ. Ե. | Հայաստանի Հանրապետության տարածքի սելավային երևույթների զարգացման ընթացքը (դինամիկան): | 132 |
| 21. | Խաչատրյան Հ. Ս. | Հայաստանի Հանրապետության անտառազրկության հարցի շուրջ: | 137 |
| 22. | Թորոսյան Մ. Մ. | ՀՀ էլեկտրաէներգետիկայի զարգացման էկոլոգա-աշխարհագրական հիմնախնդիրները: | 141 |

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 23. | Թերլեմեզյան Գ. Ե. | Աուդիտորական գործունեության կայացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում: | 148 |
| 24. | Գարաքյան Գ. Գ. | Արժեթղթերի շուկան և սեփականաշնորհումը Հայաստանի Հանրապետությունում: | 153 |
| 25. | Առաքելյան Կ. Ա. | Արտադրանքի որակի ձևավորման առանձնահատկությունները ՀՀ կոշիկի արդյունաբերության մեջ: | 157 |
| 26. | Հովակիմյան Ռ. Ռ., Կուռոյան Ն. Ն. | Ջերմային ենթահամակարգի շաբաթական օպտիմալ ռեժիմի ընտրությունը՝ հաշվի առած աշխատող ագրեգատների կազմը: | 164 |
| 27. | Ամիրխանյան Ս. Գ. | Բյուջեի կառուցվածքային բարեփոխումները: | 167 |
| 28. | Հերգնյան Մ. Ն. | Հողի հարկի գանձման իրավիճակը Գեղարքունիքի մարզում: | 180 |
| 29. | Կարապետյան Վ. Ա. | Արտաքին պարտքի բեռի գնահատումը Լաֆերի կորի միջոցով: /ռուս./ | 188 |
| 30. | Կարապետյան Վ. Ա. | Մեքսիկայի 1994թ. ճգնաժամի օրինակը և մակրոտնտեսական կայունացման քաղաքականությունը անցումային շրջանում: /ռուս./ | 193 |
| 31. | Կարապետյան Վ. Ա. | Կապիտալի շարժի հաշվի ազատականացման որոշ խնդիրներ: Լատինական Ամերիկայի երկրների փորձի ուսումնասիրումը: /ռուս./ | 204 |
| 32. | Բազիկյան Ա. Վ. | Տարածաշրջանային ծրագրերի ֆինանսավորման մի քանի հարցեր: | 211 |

ՖԻԶԻԿԱ – ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| 33. | Սարգսյան Վ. Շ., Սարգսյան Վ. Վ. | Որոշ դատողություններ Կուլոնի օրենքի վերաբերյալ: | 217 |
| 34. | Հովհաննիսյան Ա. Թ., Հովսեփյան Ա. Ռ. | Հերկոնային ռելեի դինամիկական բնութագրերի վերլուծությունը: | 221 |
| 35. | Հովհաննիսյան Ա. Թ., Դալլաքյան Ս. Ռ., Բեգոյան Կ. Վ. | Էրգատիկական արտադրության կառավարման համակարգերի նախագծման մի քանի հարցեր: /ռուս./ | 224 |

| | | | |
|---|---|---|---|
| 36. | Հայրապետյան Վ. Ժ. | Կորագծային քառանկյան տեսքով լայնական հատույթով ուղղագծային անիզոտրոպ պրիզմատիկ ձողերի ծռման խնդրի լուծման մասին: /ռուս./ | 227 |
| 37. | Հայրապետյան Վ. Ժ., Հարությունյան Ռ. Ա. | Երկու կողմերով ամրակցված ուղղագծային օրթոտրոպ օղակային սեկտորի հարթ դեֆորմացիան: /ռուս./ | 236 |
| 38. | Աֆրիկյան Տ. Հ. | Մշակվող մակերևույթի նկատմամբ աբրազիվային հատիկների կողմնորոշման ազդեցությունը աշխատունակության վրա: /ռուս./ | 244 |
| 39. | Հակոբյան Մ. Ջ. | Քամու ուժով աշխատող գեներատորի լարման կարգավորիչ: | 247 |
| 40. | Վարդանյան Ա. Ա. | Ինֆորմացիոն համակարգերի ներդրումը նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների մեջ: /ռուս./ | 250 |
| 41. | Հովհաննիսյան Ա. Պ. | Նոր քիմիական մանրաթել ակրիլանիտրիլի հիման վրա: | 255 |
| 42. | Հովհաննիսյան Ա. Թ., Մարտիրյան Ա. Ի., Կալազովա Ռ. Վ. | Մի քանի մագնիսական նյութերի ստացման և հետազոտման մեթոդները: /ռուս./ | 257 |
| | | ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ | |
| 43. | Սիմոնյան Ա. Ա. Ստեփանյան Ռ. Ա. Բաղալյան Ռ. Ա., Սիմոնյան Ռ. Ա. | Օքսիդացման և ֆոսֆորիդացման ջերմակարգավորիչ փեղեքումը ուղեղում հավերի էմբրիոգենեզում: /ռուս./ | 262 |
| 44. | Անջելյան Բ. Հ. | Շրջակա միջավայրը և մարդու առողջությունը: | 267 |
| 45. | Հայրապետյան Էդ., Ավագյան Մ. Պ., Անտոնյան Ն. Լ. | Գեղարքունիքի մարզի Գավառի վարչատարածքային շրջանի վարելահողերի ջրաֆիզիկական հատկությունները և բարելավման ուղիները: | 270 |
| 46. | Ցավուրյան Է. Գ., Ցավուրյան Ռ. Կ. | Կենդանիների վարքը էքստրեմալ պայմաններում: /ռուս./ | 273 |
| 47. | Ցավուրյան Է. Գ., Ցավուրյան Ռ. Կ., Վիրաբյան Ա. Ռ. | Տաքարյուն կենդանիների մի քանի տեսակների գոտիական տեղաբախշումը Հայաստանում: /ռուս./ | 275 |
| 48. | Ցավուրյան Է. Գ., Վիրաբյան Ա. Ռ., Պոպով Գ. Յու. | Մի քանի կաթնասունների արյան մեջ նորմայից շեղումների պատճառները: /ռուս./ | 277 |
| 49. | Բաղոյան Ս. Վ., Բաղոյան Ա. Ս. | Ցանքի ժամկետների և նորմաների հետազդեցությունը կորնգանի սերմերի առաջին սերնդի վրա Սևանի ավազանի պայմաններում: | 279 |
| 50. | Ավետիսյան Ֆ. Վ., Պապոյան Տ. Զ., Դովլաթյան Վ. Վ. | Նոր պեստիցիդների սինթեզ B-ամինոէթիլի, P-տոլուոլսուլֆամիտի հիման վրա: /ռուս./ | 283 |

| | | | |
|---|---|---|---|
| 51. | Ավետիսյան Ֆ. Վ., Պապոյան Տ. Զ., Դովլաթյան Վ. Վ. | Նատրիումի N-կ-թիազոպիլսուլֆոնամիդոֆենիլդի-թիոկարբամատի սինթեզը և փոխարկումները: /ռուս./ | 285 |

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 52. | Մինասյան Կ. Ա. | Դատաիրավական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում: | 286 |
| 53. | Նազարյան Մ. Ա. | Պետական ծառայողների վարչաիրավական դրությունը Հայաստանի Հանրապետությունում: | 290 |
| 54. | Հակոբյան Ռ. Խ. | Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի հիմնադրույթները: | 296 |
| 55. | Հակոբյան Ռ. Խ. | Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հատուկ մասի հիմնական փոփոխությունները: | 300 |
| 56. | Հակոբյան Մ. Ե. | Ամուսնու /նախկին ամուսնու/ օգտին ալիմենտ բռնագանձելու մի քանի հարցեր: | 303 |
| 57. | Ապիյան Ն. Ա. | Իրավական դաստիարակություն: /ռուս./ | 314 |
| 58. | Պետրոսյան Բ. | Իրավաբանական պատասխանատվության համակարգ հասկացությունը: | 321 |
| 59. | Թովմասյան Մ. | Իրավախախտումների պատճառները և դրանց հաղթահարման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: | 331 |
| 60. | Հակոբյան Կ. Դ. | Հայաստանի մշակութային ղեկավարման մարմինների կազմավորումը և դրա վերաբերյալ օրենսդրության զարգացումը /1920-1970թթ./: /ռուս./ | 346 |
| 61. | Հակոբյան Կ. Դ. | ՀՀ մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերով նախարարության նոր կանոնադրությունը, առավելությունները և բացթողումները: /ռուս./ | 363 |
| 62. | Հակոբյան Կ. Դ. | ՀՀ մշակութային համակարգի ղեկավարման ընդհանուր բնութագիրը և նրա սկզբունքները /1990-1995թթ./: /ռուս./ | 375 |
| 63. | Խաչատրյան Ա. Հ. | Հարկային մարմինների համակարգերի արտասահմանյան մոդելների բնութագիրը: /ռուս./ | 383 |